

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2025 Թ. ՄԱՅԻՍԻ 26-Ի ԹԻՎ 14 ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2024-25 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
2. Ֆակուլտետի ՈւԳԸ նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների մասին:
3. Ամբիոնների վարիչների հաղորդումը դասալսումների մասին (դասալսումների վերաբերյալ տվյալները պետք է ներկայացնել գրավոր):
4. Ընթացիկ հարցեր:

Տ.Վ.Ղռչիկյան- Հարգելի գործընկերներ՝ Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի թիվ 14 նիստին՝ 16- անդամներից ներկա են 13-ը, Դուք ծանոթ եք աշխատանքային օրակարգին, սակայն օրակարգում տեղի է ունեցել փոփոխություն, որը պայմանավորված է ՈւԳԸ-ի նախագահի հաղորդման հետ: Ըստ ՈւԳԸ-ի կանոնադրության ՈւԳԸ-ի նախագահը ֆակուլտետում հաղորդում չի ներկայացնում, նա հաշվետու է ԵՊՀ ՈւԳԸ-ի խորհրդին:

Այսպիսով այսօրվա օրակարգը հետևյալն է.

1. Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2024-25 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը դասալսումների մասին (դասալսումների վերաբերյալ տվյալները պետք է ներկայացնել գրավոր):
3. Ընթացիկ հարցեր:

1. Տ.Վ.Ղոչիկյան – Լսենք Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվությունը կատարած աշխատանքների վերաբերյալ:

Գ.Ս.Գրիգորյանի հաշվետվությունը ամբողջությամբ կցվում է:

Տ.Վ.Ղոչիկյան – Օրակարգի հաջորդ հարցը վերաբերվում է դասալսումներին: Ամբիոնների վարիչները ներկայացնեն իրենց դիտարկումները:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան – ամբիոնում իրականացվել է դասալսումներ, ինչպես առաջին կիսամյակում, այնպես էլ երկրորդ կիսամյակում: (Ներկայացվում է ամբողջությամբ)

Օրգանական քիմիայի ամբիոնում

Դասալսումները իրականացվել են ստուգելով ուսանողների կողմից կատարված գրառումների և տոմսերի համապատասխանությունը հաստատված ծրագրերին: ներկա եմ գտնվել մասնագիտական առարկաների քննություններին.

Լաբորատոր աշխատանքների դեպքում ուշադրությունը հիմնականում դարձվել է եթե վարում են տարբեր դասախոսներ, ապա ծրագրի հետևողականությանը և նման մոտեցումների կիրառմանը.

Քիմիայի և Սննդի անվտանգության բաժիններում ուշադրություն է դարձվել փորձերի անհատական կատարմանը

Առարկա	Կուրս	Դասախոս	Որոշում
ՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ-2	Քիմիա-3	Ալեքսանյան	Համապատասխանում է
Օրգ քիմ հիմունքներ	ՍԱն-1, Քիմիա-2		
Բնական միաց.քիմիա	ՍԱն-4	Ավետիսյան	Համապատասխանում է(եղել են քննարկումներ դասավանդման մեթոդիկայի հետ Սննդի քիմիա առարկայի

			հետ վերադրումներից խուսափելու համար)
Օրգանական քիմիա	ՍԱն-2,3, կենս	Գալստյան Լ	Համապատասխանում է
Քիմիա-2	Կենս-1	Կարապետյան	Համապատասխանում է (եղել են քննարկումներ Կենսաբ ֆակ հետ Կենսաքիմիա առարկայի հետ վերադրումներից խուսափելում համար) Առաջարկվել է նոր ծրագիր
Օրգանական քիմիա	Կենս-1	Կարապետյան	Համապատասխանում է
Օրգանական սինթեզ	Քիմ-4	Համբարձումյան	Համապատասխանում է
Տեսական օրգ քիմիա	Քիմիա մագ		
Օրգ սինթեզի ստրատեգիա			
Թունաբանական քիմիա	ՍԱն-3	Սամվելյան	Համապատասխանում է
Հավելանյութեր	ՍԱն-4		

Լաբորատոր աշխատանքները իրականացվել են ըստ նախատեսված ծրագրի:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ Գ.Ս.Գրիգորյան (Ներկայացվում է ամբողջությամբ) 2024-2025 ուսումնական տարում իրականացվել են դասալսումներ ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ կիսամյակներում: Իրականացվել են ամբիոնի կողմից դասավանդվող հետևյալ առարկաների դասալսումներ.

	Առարկա	Կրթական ծրագիր	Կուրս	Դասախոս
1.	Փորձարարական տվյալների մշակում (դաս.)	Քիմիա	Բ1	Ղազոյան Հեղինե
2.	Նյութի կառույց (լաբ.)	Սննդի անվտանգություն	Բ2	Զատիկյան Աշխեն
3.	Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրական չափանիշներ (դաս.)	Սննդի անվտանգություն	Բ4	Շիլաջյան Հասմիկ
4.	Սննդարտադրական տեխնոլոգիաներ (դաս.)	Սննդի անվտանգություն	Բ3	Գրիգորյան Կարինե
5.	Քվանտային քիմիա (դաս.)	Քիմիա	Բ2	Գաբրիելյան Լիանա
6.	Ֆիզիկական քիմիա-2 (դաս.)	Քիմիա	Բ3	Սարգսյան Հասմիկ
7.	Ֆիզիկական քիմիա-1 (դաս.)	Քիմիա	Բ2	Գաբրիելյան Լիանա
8.	Կոլոիդային քիմիա (դաս.)	Քիմիա	Բ3	Սարգսյան Հասմիկ
9.	Ֆիզիկական և կոլոիդային քիմիա (դաս.)	Քիմիա	Ֆարմ1	Գաբրիելյան Լիանա
10.	Մոլեկուլի կառուցվածք (դաս.)	Քիմիա	Բ2	Զատիկյան Աշխեն

Ընդհանուր առմամբ բոլոր դասընթացները անցկացվում են բարձր մակարդակով: Ամբիոնի բոլոր դասընթացները իրականացվում են միայն էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ՝ սահիկաշարների օգնությամբ, իսկ դասախոսությունները և համապատասխան գրքերի էլեկտրոնային տարբերակները տեղադրվում են ԵՊՀ ուսուցման կառավարման «e-learning» հարթակում: Նկատված աննշան բացթողումները քննարկվել են դասախոսների հետ՝ առանձին հանդիպումների ժամանակ:

Իրականացվել են նաև ստուգումներ տվյալ դասընթացի պլանի, «e-learning» հարթակում տեղադրված նյութերի և տոմսերի հարցերի համապատասխանությունը հաստատված մասնագրին (ծրագրին):

Հարկ է նշել, որ «Քիմիա» և «Մենդի անվտանգություն» բաժիններում ուշադրություն է դարձվում լաբորատոր դասընթացների ժամանակ ուսանողների կողմից փորձերի անհատական կատարմանը:

3. - Ընթացիկ հարցեր բաժնում ունենք մի քանի հարց

ա/ Տ.Վ.Ղոչիկյան, - Հայտարարություն ունի քիմիայի ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-ղեկանի տեղակալ Ա.Ս.Գալստյանը

Լսեցին- Քիմիայի ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-ղեկանի տեղակալ դոցենտ Ա.Ս.Գալստյանը տեղեկացրեց, որ ԵՊՀ – կայքում տեղադրված է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ղեկանի թափուր պաշտոնի համալրման նպատակով մրցութային ընտրության մասին հայտարարությունը :

Ելույթ ունեցան - Նիստի նախագահ, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյանը առաջարկեց գրասենյակի ղեկավար-ղեկանի տեղակալ ք.գ.թ., դոցենտ Ա.Ս.Գալստյանի թեկնածությունը՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ղեկանի թափուր պաշտոնի համալրման նպատակով հայտարարված մրցույթին մասնակցելու համար: Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի անդամները սատարեցին Տ.Վ.Ղոչիկյանի առաջարկին:

Որոշեցին – Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը, բաց քվեարկության միաձայն արդյունքով, երաշխավորել Քիմիայի ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-

դեկանի տեղակալ ք.գ.թ., դոցենտ Ա.Ս.Գալստյանի թեկնածությունն՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համալրման նպատակով հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

բ/ Տ.Վ.Ղուչիկյան – Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդ է դիմել՝ Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ, դոցենտ Գ.Ս.Գրիգորյանը՝ Բ.00.04 ծածկագրով, ասպիրանտների և հայցորդների ղեկավարման թույլտվություն ստանալու համար:

Ելույթ ունեցան - Քիմիայի ֆակուլտետի դեկան Տ.Ղուչիկյանը հաղորդեց, որ Գևորգ Գրիգորյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2001թ-ին, 2006թ-ին ստացել է դոցենտի կոչումը, 2007 թ-ից մինչ այժմ՝ Երևանի պետական համալսարանի ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի դոցենտ է, 2012թ-ից՝ Երևանի պետական համալսարանի, ֆիզիկական և կոլոիդների քիմիայի ամբիոնի բազային լաբորատորիայի ավագ գիտաշխատող, իսկ 2024թ-ից հանդիսանում է նույն ամբիոնի վարիչը: Գիտական գործունեության ընթացքում հրատարակել է 5 – ուսումնամեթոդական ձեռնարկ, 1- հեղինակային իրավունք, 43 հոդված, որից 11-ը՝ ՄԳՇ-ում և 46 թեզիս: Վերջին հինգ տարում՝ 11 հոդված, որից 7 –ը՝ ՄԳՇ-ում:

Որոշեցին – Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը՝ 13 կողմ (16 անդամներից ներկա էին 13-ը) բաց քվեարկությամբ որոշեց. դիմել ԵՊՀ ռեկտոր պրն. Հ.Վ.Հովհաննիսյանին միջնորդելու, դիմել Բարձրագույն որակավորման կոմիտե (ԲՈԿ), ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի դոցենտ Գ.Ս.Գրիգորյանին՝ Բ.00.04 ծածկագրով, ասպիրանտների և հայցորդների ղեկավարման թույլտվություն ստանալու համար

գ/ Տ.Վ.Ղուչիկյան- Արտաքին գրախոսման էր ուղարկվել Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի աշխատակիցներ, ք.գ.թ. Ռ. Խ. Ադամյանի, ք.գ.թ. Լ.Գ.Թադևոսյանի և ք.գ.թ. Ա.Բ.Մարտիրոսյանի՝ “Անօրգանական քիմիայի լաբորատոր աշխատանքներ” երկու հատորով “Ոչ անցումային տարրերի քիմիա” գրքի 1-ին հատորը: Այսօր արդեն ստացել ենք գրախոսման պատասխանը: Նախագահ պրոֆեսոր Տ. Վ. Ղուչիկյանը նշեց, որ Ռ.Խ.Ադամյանի, Լ.Գ.Թադևոսյանի և Ա.Բ.Մարտիրոսյանի ներկայացրած

աշխատանքը ենթարկվել է ինչպես ներամբիռնային, այնպես էլ արտաքին գրախոսման: Երկրորդ փուլի գրախոսը (ՀՀ ԳԱԱ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի, Պինդ Ֆազային ռեակցիաների մակրոկինետիկայի լաբորատորիայի գիտաշխատող, ք.գ.թ. Մարիետա Զաքարյանը) նշել է աշխատանքի անհրաժեշտությունը ուսանողների, ասպիրանտների, ուսուցիչների, դասախոսների և ընդհանրապես անօրգանական քիմիայով զբաղվողների համար: Գրախոս ք.գ.թ., գիտաշխատող Մ.Զաքարյանը ներկայացվող դասագիրքն արժևորել է և երաշխավորել է տպագրության:

Որոշեցին - Հաշվի առնելով Ռ.Խ.Ադամյանի, Լ.Գ.Թադևոսյանի և Ա.Ի.Մարտիրոսյանի “Անօրգանական քիմիայի լաբորատոր աշխատանքներ” երկու հատորով “Ոչ անցումային տարրերի քիմիա” գրքի 1-ին հատորի անհրաժեշտությունը ուսումնական գործընթացի համար՝ Քիմիայի ֆակուլտետի գիտխորհուրդը (միաձայն քվեարկության արդյունքում) որոշեց վերոհիշյալ դասագիրքը երաշխավորել տպագրության՝ 200 օրինակ տպաքանակով:

Խորհրդի նախագահ

Ք.գ.դ., պրոֆեսոր

Գիտ. քարտուղար

Ք.գ.թ., դոցենտ

Տ. Վ. Ղուչիկյան

Մ.Ա.Սամվելյան

